ՀՀ ԱՆ «ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի
ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՑ

«ԳՐԱՆԴ ՔՆԹՐՈԼ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ՏԱՐՈՆ ՊԵՏՈՅԱՆԻՆ

Ծանուցում

Հարգելի պարոն Պետոյան,

Սույնով հայտնում եմ, որ ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար ԳՀԾՁԲ-2023/2-ԴԲԳԳԿ ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 03.11.2023 թվականին կնքված Նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայությունների մատուցման N ԳՀԾՁԲ-2023/2-ԴԲԳԳԿ գնման պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) շրջանակներում պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված ծառայությունները պայմանագրի շրջանակներում կատարող հանդիսացող «Գրանդ Քնթրոլ» ՍՊԸ-ի կողմից մինչ օրս մատուցված չեն:

Ուստի, ղեկավարվելով պայմանագրի 2.1.3 կետով՝ տեղեկացնում եմ, որ պայմանագրի շրջանակներում Պատվիրատու հանդիսացող ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ-ն ամբողջությամբ միակողմանի լուծում է պայմանագիրը:

Հիմք ընդունելով պայմանագրի 7.9 կետը՝ սույն ծանուցումը հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում: Պայմանագրի նույն կետի համաձայն՝ «Գրանդ Քնթրոլ» ՍՊԸ-ն համարվում է պատշաճ ծանուցված սույն ծանուցումը հրապարակվել է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի պահանջներով՝ առաջարկում եմ 10 (տասը) օրվա ընթացքում վճարել պայմանագրի (112 500 (մեկ հարյուր տասնեկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամի չափով) և որակավորման (168.750 (մեկ հարյուր վաթսունութ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամի չափով) ապահովումները ՀՀ ԱՆ «Դատաբժշկական Գիտագործնական Կենտրոն» ՊՈԱԿ-ի 900018001975 հաշվեհամարին և ներկայացնել կատարված վճարումները հավաստող անդորրագրերը:

Հարգանքով՝

ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ